



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 6 «29» 04 2016 թ.

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավար Լ.Ռ. Ավետիսյանի «Հավատարմագրման գործընթացի համատեքստում կրթության որակի հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները» թեմայով զեկուցումը,

Որոշում է՝

1. Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի աշխատանքները գնահատել բավարար:
2. Ուսումնամեթոդական վարչության ծրագրերի բաժնի, կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից 2016-2017 ուստարում պարբերաբար կազմակերպել սեմինարներ, ամբիոնների վարիչների, ուսումնական զծով պատասխանատուների և կրթության կազմակերպիչների համար, առարկայական ծրագրերում Դուրիկյան նկարագրիչների, Որակավորումների Ազգային Շրջանակի պահանջներից բխող փոփոխությունների իրականացման նպատակով:
3. Հանձնարարել
 - ա. կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնին՝ մինչև 2016թ. մայիս ամիսը համապատասխան ստորաբաժանումներին ներկայացնել մշակված գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունների ձևաչափերը:
 - բ. համալսարանի բոլոր ստորաբաժանումներին՝ յուրաքանչյուր տարվա վերջում, ըստ նշված ձևաչափի, կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոն ներկայացնել համապատասխան հաշվետվություններ:
4. Կրթության որակի գնահատման կենտրոնի կողմից շարունակել ներքին և արտաքին շահակիցների շրջանում կրթության որակի տարբեր բաղադրիչների վերաբերյալ ամենամյա հարցումների անցկացումը և դրանց արդյունքները տեղադրել կրթության որակի գնահատման կենտրոնի կայք էջում:
5. Ամբիոնների, ուսումնամեթոդական հանձնաժողովների, կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից պարբերաբար իրականացնել ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգում և դրանց արդյունքների վերլուծությունը քննարկման առարկա դարձնել ամբիոններում և ուսումնամեթոդական հանձնաժողովում:
6. Ամբիոններում և ֆակուլտետներին գիտական խորհուրդներում պարբերաբար քննարկել «Դասախոսը ուսանողի աչքերով» (ԴՈՒՍ) հարցման ամփոփ արդյունքները:
7. 2016-2017 ուսումնական տարվանից ԴՈՒՍ-ի հարցումներ անցկացնել նաև օտար լեզվով սովորող ուսանողների շրջանում:
8. Հաստատել «Ուսման վճարի չափերի մասին կանոնակարգում» առաջարկված փոփոխությունները:
9. Հաստատել «Մագիստրատուրայի կանոնակարգում» առաջարկված փոփոխությունները:
10. Գործունե կատարման Իսկողությունը հանձնարարել ռեկտոր Մ.Ջ. Նարիմանյանին:



[Handwritten signature]

բ.գ.դ., պրոֆ. Մ. Ջ. Նարիմանյան
բ.գ.դ., պրոֆ. Տ. Գ. Ավագյան